



ՀԱՆՐԱՅԻՆ
ԸՆԴԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ
Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ



ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱԾԻՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ



Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի կողմից

Ծրագիրն իրականացվում է Հանրային քաղաքականության ինստիտուտի հետ համատեղ

Ծրագիրն իրականացվում է Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ի հետ համատեղ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով

Լրագրողների դպրոցի մասնակցության հրավեր

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն կազմակերպում է մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության ոլորտներում մշտադիտարկման և ջատագովության լուսաբանման 2-օրյա դպրոց՝ «Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան կազմակերպության և «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Դասընթաց

Դասընթացը նշված ծրագրի՝ կարողությունների զարգացմանն ուղղված հատվածի բաղադրիչն է: Նրա նպատակն է բարձրացնել լրագրողների մասնագիտական կարողությունները ծրագրի թիրախ 7 ոլորտների մշտադիտարկման և ջատագովության լուսաբանման նպատակով: Ծրագրի թեմատիկ ուղղությունները հետևյալն են.

- Խտրականություն
- Ընտանեկան բռնություն
- Խոշտանգումներից պաշտպանված լինելու իրավունք
- Արդար դատաքննության իրավունք
- Որակյալ կրթության մատչելիություն
- Առողջապահական ծառայությունների մատչելիություն
- Ընտրական իրավունք

Դասընթացը անդրադառնալու է հետևյալ հարցերին.

- Որ խնդիրների վրա են աշխատում ՀԿ-ները նշված ոլորտներում, և ինչու են դրանք կարևոր
- Ինչ նշանակություն ունեն մշտադիտարկումը և ջատագովությունը նշված ոլորտներում բարեփոխումների հարցում
- Ինչպես մեկնաբանել մշտադիտարկման արդյունքները և ներկայացնել հանրությանը մատչելի կերպով

Դասընթացի մասնակիցները կծանոթանան ծրագրի թիրախ ոլորտներում գործող կազմակերպությունների հետ, ովքեր իրականացնում են մշտադիտարկման և ջատագովության գործողություններ:

Դպրոցում դասախոսությամբ հանդես կգան մեղիա ոլորտի առաջատար մասնագետներ՝ Հայաստանից և արտերկրից:

Միջոցառումը կկայանա օգոստոսի 31 - սեպտեմբերի 2-ը, Աղվերանում: Կազմակերպիչները կհոգան մասնակիցների ճանապարհածախսը, գիշերակացը, սնունդը և մասնակցության հետ կապված այլ ծախսերը:

Սովորել՝ անելով

Ծրագիրը կարողությունների զարգացումը զուգակցում է ենթադրամաշնորհների տրամադրմամբ, որը կօգնի լրագրողներին ստացված գիտելիքները փորձարկելուն և ամրագրելուն:

Դպրոցը հաջողությամբ ավարտած լրագրողները հնարավորություն կունենան դիմելու ենթադրամաշնորհների նշված թեմաներից մեկի լուսաբանման համար:

«Իրազեկ քաղաքացիների միավորում»ը կտրամադրի մինչև 4000 եվրո կազմող 6 դրամաշնորհներ: «Իրազեկ քաղաքացիների միավորում»ը և Հանրային քաղաքականության ինստիտուտը կաջակցեն դրամաշնորհառուներին ծրագրերի իրականացման ողջ ընթացքում՝ տրամադրելով խորհրդակցություն թե՛ դրամաշնորհի կառավարման, թե՛ լուսաբանման մեթոդաբանության վերաբերյալ:

Ո՞վ կարող է դիմել

Դպրոցի մասնակիցները կընտրվեն հայտերի լրացման արդյունքում իրականացված մրցույթով: Մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել առցանց [դիմում-հայտը](#) մինչև **2018թ օգոստոսի 27-ը**:

Դիմորդ լրագրողները պետք է ցուցադրած լինեն իրենց լրագրողական տաղանդը որպես խմբագրական թիմի անդամ կամ որպես արտահաստիքային աշխատող (ֆրիլանսեր): Նրանք պետք է հետաքրքրված լինեն և ունենան առնվազն մեկ հրապարակում ծրագրի թիրախ 7 թեմաներից առնվազն մեկի վերաբերյալ: Նախապատվությունը տրվելու է երիտասարդ լրագրողներին: Մարզային ՁԼՄ-ների լրագրողների մասնակցությունը խրախուսվում է:

Ընտրությունը կկատարվի ծրագիրն իրականացնող երեք կազմակերպությունների կողմից: Դասընթացին ընտրված դիմորդները կտեղեկացվեն մինչև օգոստոսի 31-ը: Հարցերի համար խնդրում ենք զանգահարել «Իրազեկ քաղաքացիների միավորում» գրասենյակ 011 355042 հեռախոսահամարով, կամ գրել uicarmentia@gmail.com էլ-փոստի հասցեին: